

Բարոյագիտութեան մէջ կարելի չէ ընդունիլ դրապաշտ վարմունք մը կամ դրապաշտութիւնը՝ անոր միակողմանիութեան պատճառով:

7. Վճռապաշտութիւն

Վճռապաշտութիւնը (Decisionism) քաղաքական եւ իրաւաբանական տեսութիւն մըն է, ուր որոշումը եւ մասնաւոր որոշող անհատը ինքնին կը շեշտաւորուին, առանց նկատի առնելու այդ որոշման բովանդակութիւնն ու հիմնաւորումը: Այս պատճառով ալ կարելի չէ բարոյագիտութեան մէջ ընդունիլ վճռապաշտ վարմունք մը, որովհետեւ ան չէ հիմնաւորուած՝ տրամաբանական վերլուծմամբ կամ բարոյական յստակ չափանիշերով:



Բարոյագիտութիւնը, եթէ մէկ կողմէն բարդ մասնագիտութիւն մըն է, որմէ բարոյական խրթին հարցերու պարզաբանումն ու լուծումը կը սպասուի, միւս կողմէն սակայն, ան ներկայ է մեր ամենօրեայ զանազան որոշումներուն մէջ: Այս իմաստով, կարելի է խօսիլ **կիրառական բարոյագիտութեան** (Applied Ethics) մասին (տե՛ս Մաս 7, Էջ 239-էն սկսեալ):

Կիրառական բարոյագիտութեան նիւթերը աւանդականօրէն կարելի է թերեւս բաժնել՝ *անհատական* եւ *ընկերա-հասարակական* բարոյագիտութեան ընդհանուր խումբերու, սակայն այս բաժանումը այնքան ալ օգտակար չէ, մասնաւոր որ անհատը որոշ ընկերային-հասարակական շրջապատի մը անդամն է արդէն: Այս իմաստով աւելի նախընտրելի է կիրառական բարոյագիտութիւնը առնչել ընկերա-հասարակական շրջապատի մը եւ անոր հաստատութիւններուն, ինչպէս քաղաքական, իրաւական, տնտեսական, գիտական, բնապահպանական, լրատուական, բժշկական, կենսաբանական եւ այլն...:

Գործնական տեսակէտէն, կարելի է վերոյիշեալ բնագաւառներէն իւրաքանչիւրը, որպէս բարոյագիտական ինքնուրոյն հաստատութիւն նկատել: Այլ խօսքով, օրինակի համար, բժշկա-կենսաբանական բարոյական հարցերով զբաղող առանձին բարոյագիտական հաստատութիւններ կան, որոնք կը քննարկեն իրենց բնագաւառի խնդրայարոյց զանազան հարցերը, ինչպէս օրինակ.- սաղմի վիժումը (Abortion), հեշտամահութիւնը (Euthanasia), մարմնի մասերու փոխպատուաստումը (Transplantation), ծինաբանութեան (Genetics) եւ սեռային հարցերը:

Կիրառական բարոյագիտութեան նիւթերը, իրենց կարեւորութեան չափանիշով եւ բնագաւառի հետ առնչուած զանազան հարցերով հետաքրքրութեան կիզակեղրոն կը հանդիսանան ընկերութեան մը մէջ, ուր տեղի կ'ունենան՝ մասնագիտական քննախօսութիւններ (Discourse) եւ հանրային վիճաբանական ասուլիսներ: Այս ձեւով ընկերութիւնը լուսաբանութիւններ կը ստանայ տուեալ նիւթին շուրջ եւ, ի հարկին, կրնայ բարոյական կողմնորոշումներ կատարել: